# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
# ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

---

Հայաստանի Հանրապետության Արարատի
մարզի Արարատ համայնք, Ք. Արարատ,
Շահումյան 34, Հեռ. (0234)44747, Ֆաքս
(0234)44747 , ararat.ararat@mta.gov.am

N 0383

*27 մայիս 2015թ.*

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ ՊԱՐՈՆ `
ՌՈՒԲԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Աբրահամյան ․

Կից ներկայացվում է Արարատի քաղաքային համայնքի ավագանու 2015թ մայիսի 23-ին կայացած հերթական նիստի թիվ 5 արձանագրության թիվ-թիվ 13-Ն,-14 որոշումները: Առդիր 4 թերթից

**ՔԱՂԱՔԱՊԵՏ՝** **ՀԱՅԿ ՀԱՅԿՅԱՆ**

*ԿԱՏ. ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՝ Բ. Բաբայան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ, Շահումյան 34, հեռ. /0238/4-47-47, էլ. փոստ՝ araratcity@hotmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

<<25>> ՄԱՅԻՍԻ 2015 թվականի N 14

## ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԻ ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԲՆԱԿԻՉ, ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԲԱԲԿԵՆ ԱՇՈՏԻ ԲԱԲԱՅԱՆԻՆ <<ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ>> ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով ,,Տեղական Ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 24-րդ կետով.

## ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ

## ՈՐՈՇՈւՄ Է՝

Երկար տարիների կատարած անբասիր ու բարեխիղճ աշխատանքների, բնակչության և կոլեկտիվների մեծ հարգանքին արժանանալու, քաղաքի սոցիալ-տնտեսական զարգացմանը մշտապես ակտիվ մասնակցություն ցուցաբերելու համար,հասարակությանը մատուցած ծառայությունները արժեվորելու նպատակով ,,Արարատ քաղաքի պատվավոր քաղաքացի ,, կոչում շնորհել և ,,Արարատի պատվավոր քաղաքացի,, ոսկեզօծ հուշամեդալով պարգևատրել

1.Արարատի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար
Բաբկեն Աշոտի Բաբայանին

2.Քաղաքապետին՝ սույն որոշումը ծանոթացնել բնակչությանը և մասայականացնել քաղաքի կոլեկտիվներում

ԿՈՂՄ

1. ՀԵՆՐԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ ________________
2. ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ ________________
3. ԿԱՐԵՆ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ ________________
4. ԱՐՄԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ________________
5. ԱԶԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ ________________

6. ՄԱՐՏԻՆ ՆԱԴԱՐՅԱՆ ______________________

7. ՄԱՐՏԻՆ ՕՐԴՈՅԱՆ ______________________

8. ԱՐԿԱԴԻԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ ______________________

9. ԿԱՄՈ ՍԱՐԳՍՅԱՆ ______________________

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ____________ Հ. ՀԱՅԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ, Շահումյան 34, հեռ. /0238/4-47-47, էլ. փոստ՝ araratcity@hotmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

<<25>> ՄԱՅԻՍԻ 2015 թվականի N 13-Ն

## ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015Թ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍԻ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍԻ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արարատի մարզպետարանի և Արարատի քաղաքապետարանի միջև 13.04.2015թ. կնքված թիվ 9 դրամաշնորհի հատկացման պայմանագիրը 1974.0 հազ. դրամի՝ կապված աշխատավարձի, էլ. էներգիայի և գազի սակագների բարձրացման հետ, ինչպես նաև կապված քաղաքապետարանի փաստաթղթերի արխիվացման հետ և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ , 34-րդ հոդվածի 1-ին կետերի պահանջներով, ինչպես նաև համայնքի ավագանու կանոնակարգով.

## ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ

## ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ավելացնել համայնքի բյուջեի եկամուտները <<Պետբյուջեից տրամադրվող այլ ընթացիկ դոտացիաներ>>-ի մասով 1974.0 հազ. դրամ՝ սահմանելով համայնքի 2015թ. բյուջեի ընդհանուր եկամուտները 540798.449 հազ. դրամ
2. Ավելացնել համայնքի 2015թ. բյուջեի ծախսային մասը 1974.0 հազ. դրամ՝ սահմանելով բյուջեի ընդհանուր ծախսային պլանը 540798.449 հազ. դրամ, ն/թ ա/ ավելացնել համայնքի բյուջեի 0111.51 <<Օրենսդիր և գործադիր մարմինների պետական կառավարում>> ծրագրի 4111 <<Աշխատավարձ>> հոդվածը 650.0 հազ. դրամ՝ սահմանելով վերջինիս ծախսային պլանը 51815.0 հազ. դրամ:
   բ/ ավելացնել նույն ծրագրի 4241 <<Մասնագիտական ծառայություններ>> հոդվածը 60.0 հազ. դրամ՝ սահմանելով վերջինիս ծախսային պլանը 150.0 հազ. դրամ: Սահմանել ծրագրի ծախսային պլանը՝ 62737.0 հազ. դրամ
   գ/ համայնքի բյուջեի 1112.51 <<Պահուստային ֆոնդեր>> /վարչական/ ծրագրի 4891 <<Պահուստային ֆոնդեր>> հոդվածը 1264.0 հազ. դրամ՝ սահմանելով վերջինիս ծախսային և ծրագրի ծախսային պլանը 2760.7 հազ. դրամ,
   դ/ քաղաքապետին՝ կազմել նոր նախահաշիվներ և ժամանակացույցեր

ԿՈՂՄ

1. ՀԵՆՐԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ
2. ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ
3. ԿԱՐԵՆ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ
4. ԱՐՄԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
5. ԱԶԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ
6. ՄԱՐՏԻՆ ՆԱԴԱՐՅԱՆ
7. ՄԱՐՏԻՆ ՕՐԴՈՒՅԱՆ
8. ԱՐԿԱԴԻԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ
9. ԿԱՄՈ ՍԱՐԳՍՅԱՆ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Հ. ՀԱՅԿՅԱՆ